




# ՄԱՍԻՎ ԱԴԱԿՈՒԻ

Ա. ԲԵՏԱ. ԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԿՏԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԵՌԱՏԵՍ ԱԶԳԱՅԻՆԻ



**Ա**ռաստանի Հայոց մէջ տեղ տեղ  
կերեւի ձեռագիր արդարեւ հե-  
տաքրքրական ու նշանաւոր կր-  
տակի օրինակ մի, զոր հեռա-  
տես ու մեծահօգի ազգասիրին  
մէկը շարադրեր է :

Մեզի յայտնի չէ անձամբ եւ հա-  
ւաստի կերպով այս ազգային փառա-  
ւոր կտակին հեղինակը, եւ ոչ այն՝  
թէ արդեօք յիրաւի աւանդեր է ար-  
դէն ինքը 1849 տարւոյն մէջ, ինչպէս որ  
կերեւի, Մոսկուայի ու Լոնտոնի գրամա-  
նոցներուն իւր ապագայ մեծամեծ բարե-  
գործութեանց սերմունքը, որ թէ եւ այժ-

մու չափուն մէջ՝ մանանխոյ հատին կնմա-  
նին, բայց ժամանակաւ պիտի աճին մեծ-  
նան ծառանան եւ իրենց ճիւղերուն տակը  
պիտի պատոպարեն մեր կարօտեալ աղդին ալ-  
քատները, հրւանդները, եկեղեցականները,  
ուսումնականները, եւ այլն, եւ այլն, եւ այլն:  
Ուստի եւ կհամարձակիմք տպագրութեամբ  
հրատարակել այս կտակը, կամ թէ կտա-  
կային առաջարկութիւնը, ինչպէս որ մեր  
ձեռքն ընկած օրինակին մէջ կկարգամք, ա-  
ռանց ամենեւին փոփոխութեան եւ առանց  
մանրամասն խորհրդածութիւններ ընելու  
սորա զանազան կտորներուն վրայ :

Գիտեմք որ շատ մարդիկ այս գրուածքը

կարգալով՝ երեք գլխաւոր կէտերու վրայ պիտի գարձնեն աւելի իրենց մտադրութիւնը։ Մէկը այս՝ թէ ափանո որ այսպիսի մեծահոգի եւ ազգամէր անձ մը, թէպէտ եւ սըրտով շատ հարուստ՝ բայց նիւթապէս այնքան հարստութեան աէր չէ եղեր որ իւր հոյակապ մտածութեանց գոնէ քաննէրորդ կամ հարիւրերորդ մասը այժմէն իւր ձեռօքը, կամ գոնէ յիսուն վաթուուն տարիէն, իդործ գնէր յօգուտ կարօտեալ ազգիս, երկրորդը այս՝ որ երանի թէ այսպիսի դիտաւորութիւններ շատնան մեր ազգին հարուստներուուն մէջ՝ հանգերձ ջանիւք վտութապէս գործադրութեան։ Եւ երրորդը այս՝ թէ բարեմիտ կատագիրը արդեօք չափազանց երկար միջոց չէ որոշած կոնտոնի ու Մոսքուայի գրամանոցներուն այժմու վիճակին համար։ Եւ յիշաւի, յուսամը եւ ազօթեմը՝ որ երկու մեծամեծ տէրութիւնները ինչպէս որ հազարաւոր տարիններէ իվեր հաստատուն կցած են ու օր ըստ օրէ կծաղկին, այսուհետեւ ալ նոյնպէս մշտնջենաւորեն։ բայց քանի որ կտեսնեմք նոյն իսկ եւրոպական տէրութեանց ասկից 260 տարի առաջ ունեցած քաղաքական հանգամանքն ու անոնց այժմու վիճակը, եւ թէ որպան կտարբերին անոնք իրարմէ, արդեօք իրաւունք չունիմք երկրայելու թէ գուցէ ոչ կոնտոնի գրամանոցին գրութիւնը կրնայ անփոփոխ մնալ մինչեւ 260 տարի, եւ ոչ Մոսքուայի գրամանոցինը։ Թող նաեւ այս մեծ եւ գիտելու արժանի պարագան որ կտակագիրը կհամարի թէ մեր ազգին այժմու վիճակը գրեթէ սոյնպէս պիտի մնայ ամէն տեղ մինչեւ 260 տարի։ ընդ որ մեք շատ կտարակուսիմք, դէթ այս մտածելով թէ ինչպէս որ ասկից 260 տարի առաջ, այսինքն 1600-ին սկիզբները մեր ազգին թէ ոչ քաղաքական՝ գէթուսումնական վիճակը շատ տարբեր էր այժմու վիճակէն, նոյնպէս եւ աւելի եւու՝ ասկից 260 տարի ետքը ազգին վիճակը անպատճառ մեծամեծ փոփոխութիւններ պիտի ունենայ։ որով գուցէ այս Առաջարկութեան հիմնական ապայմաններն եւս իրենց զօրութիւնը կորսընցընեն, եւ արգէն շահուած ու բոլոր ազգէն մեծ ակնկալութեամք սպասուած գրամագլուխը զանազան վտանգներու հանգիպի։ Բազմաց յայտնի է, օրինակի համար, Մուրատեան հրիտակին գլխուն եկած փորձանքը, եւ այն՝ գեռ առ կենգանութեամբ ժառանգաց բարերարին, եւ նոցա ծանօթի-

ցը եւ ականատես գործակատարաց աչքին առջեւը. որով 2 միլիոն փրանքի եկամուտը կվայելեն այսօր՝ ոչ թէ 4 միլիոն ազգին աղքատ զաւակունքը, ինչպէս որ եղած է բարերար կտակագրին գիտաւորութիւնը, հապա միայն կոստանդնուպոլսոյ քանի մը հազար հոռվմէ ականաց որդիքը . . . :

Ի՞նչ եւ իցէ, մեք մեր ձեռքն ընկած օրինակէն ճշգութեամբ կտակագրեմք Սալարիկնան կտակը, եւ կթողումք որ ազգամէր ընթերցողք իրենք իրենց մը ընեն ուրիշ շատ խորհրդածութիւններ սորա զանազան յօդուածներուն վրայ։ Այսքանը միայն նորէն կըսեմք՝ թէ մեզի անյայտ եւ անձանօթ լինելով այս գրուածքին գլխաւոր եւ հարկաւոր շատ պարագաները, կհրատարակեմք լոկի իբրեւ հետաքրքրական բարի գիտաւորութիւն հեռատես եւ մեծահոգի ազգամէր եւ բարերար անձի մը, որ է — ինչպէս որ կտակին խօսքերէն կերեւի — ՍԱՂԱԹԻԿԻ ԲԻԿԻ ԻՒԶԲԱՆԵԱՅՑ յԱրցախ գաւառէ Սիւնեաց կամ Դարաբաղու։

«Կիրառութիւն եւ կարգ դրամոց եղելոց յարդունի դրաւաւելու։

Հստ զօրութեան կտակի իմոյ աւանդեմ Դրամանոցի (բանկ) Խուսաց որ ի Մոսկով՝ յարդար վաստակոց իմոց չորս հարիւր մանէթ. եւ գրամանոցի Անգլիացւոց որ ի Լոնդոն՝ հարիւր վաթունեւլց ֆունթ ստերլինգ, երկու հարիւր վաթուն տարի ժամանակաւ, յանումն հարիւրին չորս տարեկան տոկոսեօնն, որոց եւ զտոմսակս դրամատան աւանդեմ պահպանութեան արկեղն Սինօդի սրբոյ էջմիածնի։ Դրամագլուխն ունին մընալ անձեռնամուխ, եւ ոչ ոք յետ մահուան իմոյ ունիցի իրաւունս ստանալոյ եւ զտոկոսիս անգամ՝ ցլումն վերոյիշեալ պայմանեալ ժամանակին. սակայն զիտոփոխութիւն անեցեալ գրամագլուխն յայսոցիկ դրամանոցաց յայլ դրամանոց Խուսաց, Անգլիացւոց եւ կամ այլոց տէրութեանց, ապաստան առնեմ բարեմիտ դասաւորութեան սրբազնագոյն Կաթուղիկոսի եւ Սինօդի սրբոյ էջմիածնի, եւ Սրբազն Պատրիարքացն Հայոց երուսալէմայ եւ Կոստանդնուպոլսոյ։ Թարց համակամ համաձայնութեան բոլորեցուն, չներեմքնաւ միմի յինչ եւ իցէ։

Ես գոլուլ մարդ մահկանացու, զմուա ածէի զօրիհանապազ իւ իւիք եւ իցէ օֆանդակել յարդեանց իմոց Ազգի Հայոց յարաւետ դրամական օժտութեամբ առ ի լուսաւորել զբազմաթիւ մանկունս եւ աղջկունս նոցա, մարզելով իզանազան լեզուս եւ յարիեստս, որովք եւ հանդիսացուացնել յաստի աշխարիի ի կարգս լուսաւորեալ ա-

զանց, վասն որոյ եւ դնեմ զիիմն հասարակաց կրթութեան, բարերարն Աստուած կանգնեսցէ եւ օրինեսցէ զշնուածս, եւ ազգայինք գուցէ տացեն աւետիս անիւնացեալ ուկերաց իմոց յապա դարս, ընդ որս եւ խնդակեց եղէց հոգւով:

Ի լրանալ նշանակեալ երկու հարիւր վաթսուն ամաց Մըբազնագոյն Կաթուղիկոսն եւ Սինօդն սրբոյ էջմիածնի եւ Պատրիարքարանք շըրջաբերական Թղթով ազդ արացեն ընդ ամենայն տեղիս, ուր բնակին Հայք, զժամանակ ստացման տարեկան տոկոսեաց դրամագլխոյն: Հայք' ոքք ընդ հովուութեամբ Պատրիարքացն սրբոյ երուսաղմայ ( \* ), պարտաւոր են համաձայնութեամբ Պատրիարքացն իւրեանց զմի մի ազգասէր եկեղեցական եւ աշխարհական գիտնապետ նուիրակս (սլրօֆեսոր). իսկ Հայք Խուսաստանի եւ Պարսկաստանի զորքան Վիճակաւոր ունիցին, այնքան եւ գիտնապետ նուիրակս պարտաւոր են առաքել ի սուրբ էջմիածին կամ ուր հայրապետական ամեռուն եւ Սինօդն համազգական կառավարութեան գտանիցի, աւանդելով նոցա զամենայն իրաւունս իւրեանց: Այսոքիկ գիտնապետ նուիրակունք ըստ որում լինիլ պարտին եւ անդամ Խորհրդարանի, վասն որոյ ընտրեսցին հինգամեայ ժամանակաւ: Մասիք եկաւորութեան նուիրակացն եղիցին ի տոկոսեաց դրամոց իմոց լրիւ, զոր եւ ստացի իւրաքանչիւրն զսահմանեալ ինքեան մասն:

#### ՅՈՒՊԻԱՆ Ա.

Բացումն Խորհրդարանի, ատացումն երկամեայ ուկրուեաց. շինուածք երկուց ուսումնարանաց, վեց վարժարանաց, միոյ սպարանի եւ եօրն աղյատանցաց.

Նուիրակունք ժողովեալ ի լրանալ երկու հարիւր վաթսուն ամաց առ ընդհանրական Հայրապետանայն Հայոց կազմեսցեն զիորհրդարանն, որոց Աստենապետն է նոյն ինքն ընդհանրական Հայրապետն ամենայն Հայոց: Անդամք, նուիրակունք. եւ մինն որ երէցն իցէ ի մէջ ժառանգաց եղբարց իմոց ՑԱՐՈՒԹԻՒՆԻ եւ ԿԱՐԱՊԵՏ Բէկ Ինքնաւելննի, արացեն զարժանադատ խորհրդատութիւնս ի մասին կտակակատարութեանս եւ իւրաքանչիւր յօդուածոց իմոց աւանդութեանց, ոքք յետ վայելչական եղբակացութեանց ձեռն ի գործ արացեն ստանալ զտոկոսին վեց ամսէ վեց ամիս՝ վասն սկզբնաւորութեան շինութեանց:

1. Շինեսցեն զմի հոյակապ ուսումնարան (ունի վէրսիսէտ) եռայարկ եւ բազմասենեակ, պարունակող 200 աշակերտաց, ծախելով ի շինութիւն այնորիկ, գրատան, հիւանդանոցի, եկեղեցւոյ, բաղանեաց եւ ընդարձակ այգւոյ նորա հանքանեաց:

(\*) Թուի թէ պէտք է առելցընել, «Եւ Կոստանդնուպոլս»:

Մանեկ արձ.
դերձ անկողնօք երկու հարիւր աշակերտաց . . . . . 375,000
2. Զմի մեծ ուսումնարան վասն տարածման հայկական առաքելական եկեղեցւոյ վասն յիսուն եղբարց: ի շինութիւն այսորիկ եւ եկեղեցւոյ, հիւանդանոցի, գրատան եւ այգւոյ նորա, նշանակեմ . . . . . 200,000
3. Զմի տպարան վասն բազում լեզուաց, անդ՝ ուր վերոյիշեալ ուսումնարանք կառուսցին, վասն շինութեան այնորիկ, մամլոց, տառից եւ այլոց, նշանակեմ . . . . . 100,000
4. Զմից վարժարանս. երեքն վասն մանկանց եւ երեքն վասն աղջկանց, հանդերձ վեց փոքրիկ գրատամբք, վեց պարտիզօք, վեց փոքրիկ եկեղեցեօք, վեց հիւանդանոցք եւ վեց բաղանեօք, պարունակողս 100 աշակերտաց կամ աշակերտութեաց, ծախելով իշխութիւն ամենից ըստ հանգամանաց ընտրելի տեղեացն . . . . . 400,000
5. Զեօթն աղքատանոցս, իւրաքանչիւրն վասն հարիւր աղքատաց . . . . . 480,000
6. Մախք երկուց ամաց Խորհրդարանի, վասն բարտուղարի, գրագրի, թղթոյ, գրագրութեանց, եւ այն . . . . . 10,000
7. Վասն գալստեան գիտնապետ նուիրակաց, ոմանց աւելի, ոմանց փոքր. այս թողում Մըբազնագոյն Կաթուղիկոսի եւ Սինօդի սրբոյ էջմիածնի, ընդ ամէնն . . . . . 33,000
8. Վասն մնալոյ նուիրակաց յերկուս ամս, թոշակ նոցա ամենից հաւասարաշափ բաժանել քանի եւ իցեն, ընդ ամէնն . . . . . 66,000
9. Վասն Ֆանալարի հորդութեան նուիրակաց յայլ եւ այլ գաւառս յընտրութիւն պատշաճ տեղեաց ի կառուցանել զշինուածն . . . . . 15,000
10. Վասն Ֆարտարագործաց եւ Ֆարտարաց ուսումնարանաց, Վարժարանաց, եկեղեցեաց, աղքատանոցաց, հիւանդանոցաց, տպարանի, եւ այլոց . . . . . 30,000
11. Վասն օրինելոյ զիիմն վարժարանաց եւ աղքատանոցաց, ընդ ամէնն ծախսեսցի. 15,000
12. Բաւարտ այսոցիկ Վիճակաւոր Առաջնորդք մատուցեն զպատարագ, յիշեցին զիոգի մեղաւորիս եւ տացեն հացկերոյթս 1001 աղքատաց, որոյ վասն նշանակեմ. . . . . 30,000
13. Վասն օրինելոյ զիիմն երից ուսումնարանաց եւ տպարանի, Մըբազնագոյն Կաթուղիկոսն ինքնին մատուցէ զպատարագ, յիշելով զիոգի մեղաւորիս, կատարեսցէ զիոգեհանգիստ իմ, եւ ստացի ժամոց 4000 մանէթ, եւ վասն ծախուց 4000 մանէթ . . . . . 8,000 *

14. Ցաւարտ ուսումնարանաց եւ տպարանին նոյնպէս Սրբազնագոյն Կաթոլիկոսն մատուցէ զպատարագ վասն հոգւոյ մեղաւորիս, կերակրեացէ գլուխ աղքատս, ստացի ժամոցս 4000 մանէթ, միաբանք արբոյ էջմիածնի 4000 մանէթ, Սինոդն 4000 մանէթ, բաժանեսցեն տնանկաց 2000 մանէթ եւ վասն ծախուց 6000 մանէթ . . . . .	20,000
15. Վասն գալստեան որ երէցն իցէ ի մէջ ժառանգաց որդւոց եղբօրն իմոյ յանդամակցութիւն Խորիրդարանի, նշանակեմ յայս երկուս ամս ստանալ . . . . .	10,000
16. Վասն քաղաքական Հայ աղքատանոցի Թիֆլիզու . . . . .	30,000
17. Վասն նորոգութեան երկուց աթոռոցն Հայոց Սրբազն Թաղէոսի եւ Բարթուղիմէոսի առաքելոց, նախկին Լուսաւորչացն . . . . .	50,000
18. Կանգնեսցի ի դրան մեծ ուսումնարանի երկու հոյակապ արձան ծուլեալ մին սրբոյն Վարդանայ, միւսն սրբոց Մերոպայ եւ Սահակայ . . . . .	50,000
19. Ստացին յայս երկու ամս արու ժառանգք ՑԱՐՈՒԹԻՒՆ Բէ՛Դ եւ ԿԱՐԱՊԵՏ Բէ՛Դ ԽԵԶԲԱՆԵԱՆՑԻ Թէ իցեն մնացեալ Հայ ազգաւ եւ կրօնիւ, բաժանեսցեն ի մէջ իւրեանց հաւասարաչափ . . . . .	200,000
20. Ստացին արու ժառանգք որդւոց քեռն իմոյ ՑՈՎԾԻՓ Բէ՛Դ եւ ՄԻՔԱՅԻԼ Բէ՛Դ ԲԱՀՐԱՄԵԱՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, նոյնպէս որք իցեն մնացեալ Հայ ազգաւ եւ կրօնիւ յայս երկուս ամս . . . . .	100,000
21. Վասն նորոգութեան Աթոռոյն Հայոց սրբոյ էջմիածնայ, երուսաղեմայ եւ Գանձասարու, իւրաքանչիւրոցն 30,000 մանէթ	90,000
22. Միսիթարեան միաբանութիւնն Վենետիկցոց (*) ստացի յայս երկու ամս . .	20,000
23. Յայսմիկերկու ամս ստացի որբանոցն Մուկովու . . . . .	20,000
24. Նոյնպէս որբանոցն Լոնդոնու . . . . .	20,000
25. Եզմիրու վարժարանաց . . . . .	20,000
Ամենայն վերոգրեալ շինութիւնք պարտին աւարտիլ յերկուս տարիս, այսինքն ի 2111 ամի Տեառն. որպէս յերկուամեայ տոկոսեաց յաւելսան, նոյնպէս եթէ Տէր մի՛ արացէ ի յապաշմանէ շինութեանց պատճառաւ իւիք եւս յաւելսալը՝ են ընդ կարգադրութեամբ Խորիրդարանին:	

(\*) Կերեսի քէ կտակագիրը կյուսայ որ մինչեւ ցայնժամ Միսիթարեան միաբանութիւնը անպատճառ Հայ կինքի ազգաւ եւ կրօնիւ:

ՅՈՒՊԻԱՆ Բ.

Խորհրդարամ եւ Պաշօն նորա.

Ա. Խորիրդարանն ՍԱՂԱԹԷԼԵԱՆ մայր ուսումնարանի ազգային լուսաւորութեան բաղկանայ ի միոյ Ասենապետէ, որ է նոյն ինքն ընդհանրական Հայրապետն ամենայն Հայոց ո՛քան եւ կեցցէ, ի նուիրակ գիտնապետաց եղելոց ի զանազան կողմանց, եւ ի միոյ երէց ժառանգաւորաց որդւոց եղբօր իմոյ, որն չիցէ փոխեալ զիրօն Հայոց :

Բ. Ի սկզբան անդ Խորիրդարանն պարտաւորէ անուանել զինքն ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՄԱՅՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍՈՒՐՈՒԹԵԱՆ: Զմեծ ուսումնարանն (ունիվէրսիթէ) ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՄԱՅՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍՈՒՐՈՐՈՒԹԵԱՆ: Զմիւս ուսումնարանն ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՎԱՄՊ ՍԱՐԱՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ: Զվարժարանս, ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՐԱՆ. Եւ զաղքատանոցս, ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ԱՂՔԱՑԱՆՈՅ: Խոկ զեկեղեցիս որ ի նոսա, ընծայել անուան սրբոյ Կուսին, յանուն հանգուցեալ կենակցի իմոյ ՄԱՐԱՄԱՅԱՅ:

Գ. Զընտրութիւն եւ կարգումն նուիրակ անդամոց յանձնեմ իւրաքանչիւր հասարակութեան, ընտրել զիւր գիւր գիտնապետս ի լրանալ ինքն ամացն:

Դ. Խորիրդարանն Սաղաթէլեան մայր ուսումնարանի ազգային լուսաւորութեան լիակատար տէր է եւ կատարող իմոյ կտակի. կարէ յաւելու զնորանոր բարեկարգութիւնս, բայց ո՛չ ընաւ փոփոխել զիիմն կամ զնպատակ սահմանադրութեանց իմոց: Նա ստանայ զտարեկան տոկոսին դրամագիսոյն, կառավարէ զուսումնարանս, ԸԸՎարժարանս, զաղքատանոցս, զտպարանն: Կարգէ զվերակացուս եւ զվերակացուիս, հասուցէ զուոնիկս նոցա, ամի առնէ զընդհանրական հարցաբնութիւն աշակերտաց. յետ որոյ տպագրեալ զտարեկան հաշիւս ելումտից ստացեալ գումարին, յառաջադիմութեանց, եւ արարեալ կարգադրութեանց, օրինակս 1200, բաշխէ զայնս ծրի ընդհանուր ազգի ի գիտութիւն:

Ե. Վեցն յանդամոց նուիրակացն Խորիրդարանին պարտին անպատճառ գու ազգաւ եւ կրօնիւ Հայ, իսկ մնացեալքն կարեն լինիլ այլ եւ այլ կրօնիւ:

Զ. Խորիրդարանին նշանակեմ ծախս ի տարին, վասն ատենադպրի, քարտուղարի, գրագրաց, համարակալաց, եւ այլոց. 10,000

Սրբազնագոյն Կաթուղիկոսն, որպէս Ատենապետ, ստանալոց է ամի առնի . . . . . 5,000

## ՅՈՒՊԻԱԾ Գ.

Ա. Սաղաթէլեան մայր ուսումնարան շինեցի անպատճառ յերեւան կամ Ալեքսանդրօպոլ կամ յոտս Արագածայ յԱրարատան գաւառի, եւ ո՛չ այլուր:

Բ. Գիտնապետ հայկական լեզուի մայր ուսումնարանին պարտի լինիլ եւ Վերատեսուչ:

Գ. Խաղաթէլեան մայր ուսումնարանի ազգային լրսաւորութեան ուսանիցին 200 աշակերտք ի Հայոց. 130 ի Թուսաստանէ եկեալք, 100 յամանեան տէրութենէ, 20 ի Պարսկաստանէ եւ 20 յայլ եւ այլ տեղեաց. թէ զթիւս ո՛չ լրացի ի Հայոց, յայնժամ կարէ լինիլ եւ յայլոց ազգաց:

Դ. Բնակեցին ի տուէ եւ ի գիշերի յուսումնարանին, զգեցցին եւ կերակրեցին ի ծախուց այնորիկ, եւ անուանեցին ԱԱ.ԱԹԷԼԵԱՆ ՈՐԴԵԳԻՔ:

Ե. Տարեկան ծախը 200 որդեգրաց, ուտելեաց եւ զգենլեաց մէն մի 300 մանէթ. 60,000

Զ. Անդամք Խորհրդարանի, որպէս եւ նըւրիք եւ գիտնապետք պարտին շարունակել եւ զբասատութիւնս մի մի լեզուաց. վասն որոց նշանակեմ ամի ամբ ուոնիկս, զրոս կարեն ըստ քանակութեան իւրեանց բաժանել . . . . . 36,000

Է. Միւս ուսուցչաց վասն զանազան մակացութեանց, զիարդ եւ Խորհրդարանն արժան դատեցէ, ի տարին . . . . . 60,000

Ը. Չորս վերակացուաց . . . . . 4,000

Թ. Ի խնամարկութիւն հիւանդ աշակերտաց, ի գին գեղօրէից, բժշկի եւ ստորագրելոց նորա . . . . . 8,000

Ժ. Յաղագս կարկատանաց ուսումնարանի. Եւս եւ զթուղթս, զմելան, զմոմ, ըզփայտս, եւ ի պարզել բարեջան աշակերտաց, ի գնել զինութիւնս, կամ վասն թանգարանին եւ Գրատան . . . . . 30,000

ԺԱ. Ի ոոնիկ միոյ քահանայի, միոյ տիրացուի եւ ժամկոչի եւ ալիտոյից եկեղեցւոյ, ի տարին . . . . . 2,000

## ՅՈՒՊԻԱԾ Դ.

**Սաղարելեան ուսումնարան վասն տարածման Հայկական առաջնարարական եկեղեցւոյ.**

Ա. Ուսումնարանն շինեցի ի Վաղարշապատ կամ իցէ ընդհանրական Աթոռն Հայոց: Վերատեսուչն սորա նշանակեցի ի Խորհրդարանէ Աքքեալիսկոպոս մի Հայոց:

Բ. Որդեգիրք ուսումնարանին պարտին լինիլ ազգաւ եւ կրօնիւ Հայ: Ուխտել զանձինս կուսակրօնս կարգիս այսորիկ, կեալ, ննչել, ուտել եւ զգենուլ ի հաշուէ ուսումնարանին:

Գ. Ծախը յիսուն եղբարցն անդ ուսանողաց մէն մի 400 մանէթ, լինի. . . . . 20,000

Դ. Վերատեսուչ Աքքեալիսկոպոսին ոռնիկ 2,000

Ե. Վարժապետաց ի զանազան լեզու հարկաւորեալ կարգի նոցա . . . . . 30,000

Զ. Յաղագս կարկատանաց ուսումնարանի, գրատան նոցա, բազմնեաց, եւ այն 30,000

Է. Ի ոոնիկ միոյ քահանայի եւ տիրացուի եւ վասն եկեղեցւոյ ծախք. . . . . 2,000

Ը. Յաղագս եղբարց շրջելոց ընդ այլ եւ այլ տեղիս վասն տարածելոյ զՀայկական առաքելական հաւատս. . . . . 100,000

Թ. Բժշկի եւ գեղօրէից եւ այլոց որք վերաբերին ի գեղարանն . . . . . 3,000

ԸԱՆԹՈԹՈՒԹԻՒՆ. Երէ ի զումարէ շինութեան ուսումնարանի սոցա ըստ յայոցին նշանակելոց յաւելցի, տացի ի հաշիւ կարգի սոցա ածել տոկոսօք գրագմանալ նոցա այսոցիկ քարոզաց, առ ի բաւականանալ ծախուց նոցա:

## ՅՈՒՊԻԱԾ Ե.

**Տպարան Սաղարելեան մայր ուսումնարանի.**

Ա. Ամենայն գրեանք որք հարկաւորին ի մէջ ուսումնարանաց եւ վարժարանաց իպէտս աշակերտաց եւ աշակերտութիւնաց, տպագրեցին յայս տպարանի ծրի:

Բ. Շինեցի տպարանն մերձ Սաղաթէլեան մայր ուսումնարանի ազգային լրսաւորութեան:

Գ. Եթէ տպեցին եւ վաճառեցին նորատիպ մատեանք, արգիւնք այնոցիկ յաւելցին ի գրամագլուխն յանուն տպարանի, բայց միշտ միջնորդութեամբ Խորհրդարանի:

Դ. Վասն ծախուց տպարանին նշանակեմ ի տարին . . . . . 20,000

## ՅՈՒՊԻԱԾ Զ.

**Սաղարելեան վեց վարժարանի.**

Ա. Երեքն ի սոցանէ եղիցին մանկանց արական սեռի, եւ երեքն իգական. յորոց յիւրաքանչիւրումն կրթեցին թուով 100 ուսանողք միանգամյան ի Հայոց, յութնամենից ի վեր ցլամեան եւ ոչ աւելի:

Բ. Մի վարժարան մանկանց եւ աղջկանց կառուցին անպատճառ յԱրցախ հայրենիս իմ. իսկ միւսքն ի կողման Խուսաստանի, Տաճկաստանի եւ Պարսկաստանի. ընտրութիւն տեղեաց թողում կշուադատութեան Խորհրդարանի:

Դ. Վասն ամենայն պիտոյից զգենլեաց եւ ուտելեաց 300 աշակերտաց մէն մի 150 մանէթ, եւ 300 աշակերտուինաց 200 մա- նէթ . . . . .	105,000
Դ. Ի պէտա կարկատանաց, փայտի, մո- մոյ, բաղանեաց, ռառայից եւ այլ մաս- նաւոր պիտոյից վեց վարժարանաց . . .	24,000
Ե. Բժշկի եւ դեղօրէից վեց հիւանդա- նոցաց . . . . .	18,000
Զ. Անակնկալ ծախը այսր վեց վարժա- րանաց վասն երթեւեկութեան աշակեր- տուինաց կամ ի պարգեւ բարեջան աշա- կերտաց . . . . .	18,000
Է. Երից վերատեսչուինաց 4500 մանէթ, եւ երից վերատեսչաց 3000 մանէթ . . .	7,500
Ը. Ուսուցչուինաց թոշակ 21,000 մանէթ, եւ ուսուցչաց 36,000 . . . . .	57,000
Թ. Վ. Եց եկեղեցեաց վարժարանաց ընժայ- ելոց անուան սրբոյն Մարիամայ վասն քա- հանայից, տիրացւոց եւ այլոց իրաց . . .	6,000
Ժ. Աղջկունք աղքատ գերդաստանաց ա- ւարտենք զրնժաց ուսման իւրեանց ա- ռաքինութեամբ եւ անարատ բաղաքա- վարութեամբ, յօժիտ իւրաքանչիւրն ըս- տացի 500 մանէթ, վասն որոյ եւ նշանա- կեմ ի տարին . . . . .	5,000

### Եօրձ Սաղարէլեան աղյատանց,

Յիւրաքանչիւր աղքատանցոց կերակրեսցին եւ  
սնասցին անդ 100 աղքատք :

Ա. Մինն ի սոցանէ շինեսցի անպատճառ յԱրցախ,  
եւ մինն ի Վաղարշապատ, իսկ ինքն ուր Խոր-  
իըրդարանն յարմար դատեսցի:

Բ. Աղքատք ընտրեալք յաղքատանցոց, պարտին  
ստանալ զիկայութիւն վասն անկարօղ գոլոյ իւ-  
րեանց յաշխատիլ:

(Ստորագրեալ Վ. Բաց տառերով) Տիտուկառնի Սակետնիկ ՍԱՂԱԹԻ, ԽԻԶԲԱՆԵԱՆՅ:



Ա.Ռ ԸՆԹԵՐՑՈՂՆ ՍԱԴԱԹԻԿԵԼԵԱՆ ԿՏԾԿԻՒ.

Կարգացիք, ով աղքասէր, զայս ճոխ կըտակ հեռատես,

եւ թընդաց սիրտ ալէկոծ. — Ասա եւ գու ինծի պէս.

ԱՇ, ինչու պէտք է արդեօք, ով տառապեալդ Հայատան,

Այնպիսի պայծառ աւուրք այդքան քեղնէ հեռանան . . .

Մի գուցէ մինչեւ համրես երկերիւր յիսուն տարին,

Կամ աշխարհըս վերջանայ, կամ խափանի եւ այդ բարին :

Դ. Ամենայն աղքատանցոց ունիցի զիւր վերա-  
տեսուչ եւ վերակացուս, որոց եւ կառավարու-  
թեան հաղորդեսցի Վիճակաւոր Առաջնորդն այնը  
գաւառի :

Դ. Վիճակաւոր Առաջնորդաց որք պար-  
տին վերահասու լինիլ աղքատանցոցաց,  
7000 մանէթ, եօթն վերատեսչաց 7000  
մանէթ, եւ եօթն վերակացուաց 4800 մա-  
նէթ, ընդ ամէնն . . . . . 18,800

Ե. Ի գին ուտելեաց, զգենլեաց, փայտի,  
մոմոյ եւ այլն, վասն 700 աշակերտաց . 140,000

Զ. Վասն եկեղեցեաց, որք ի կից աղքա-  
տանցոցաց . . . . . 7,000

Է. Վասն կարկատանաց . . . . . 10,500

Բաժանումն մնացեալ տարեկան տոկոսեա .

Ա. Տացի իւրաքանչիւր ամի Մխիթարեան  
միաբանութեանն . . . . . 10,000

Բ. Որբանոցի Խուսաց որ ի Մոսկով . . . 10,000

Գ. Որբանոցի Անգղիացւոց որ ի Լոնդոն. 10,000

Դ. Արու ժառանգաց իմոց, այսինքն որ-  
դւոց եղբօրն իմոյ ՅԱՐՈՒԹԻՒՆ Բէդ եւ ԿԱ-  
ՐԱՊԵՏ Բէդ ՍԱՀԱԿԵԱՆ ԻՒԶԲԱՇԵԱՆՑԻ յոր-  
դւոց յորդիս որք մնասցեն աղքաւ եւ կը-  
րոնիւ Հայ . . . . . 100,000

Ե. Որդւոց քեռն իմոյ ՄԱՐԴԱՐՑԻ, այսինքն  
ժառանգաց ԲԱՐՁԱՄ Բէդ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ  
Արցախեցւոց, որք մնասցեն կրօնիւ եւ  
աղքաւ Հայ . . . . . 100,000

Զ. Յիւրաքանչիւր ամի ստացին Աթոռն  
Էջմիածնայ 3000 մանէթ, վանքն Գանձա-  
սարու 2000 մանէթ, եկեղեցիք Թիֆլիզու  
5000 մանէթ, Շուշայ 5000 մանէթ, . . . 15,000

Է. Խզմիրեցի Հայք ստացին յիւրաքան-  
չիւր ամի վասն վարժարանաց . . . . . 10,000